ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1956 Общественные науки

Դ. Վարդումյան

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1951—1955 ԹԹ.

Ստեղծագործաբար շարունակելով և նոր պայմաններում զարգացնելով նախասովետական հայ ազգագրության առողջ տրադիցիաները, սովետական ազգագրագետների համագործակցությամբ, սովետահայ ազգագրագետները ետպատերազմյան շրջանում, հատկապես 1951—1955 թթ., դաշտային նոր նյութեր հավաքելուն զուգընթաց, իրենց աշխատանքներում հիմնական շեշտը դրել են նյութերի ուսումնասիրման և գիտական ընդհանրացման վրա։ Այս շրջանում միաժամանակ խորացել է շրջադարձը դեպի ժողովրդի ժամանակակից կենցաղի և կուլտուրայի ուսումնասիրությունը։ Եթե մինչ այդ ազգագրագետը արդի կենցաղը դիտում էր միայն դրանում տոհմային կարգերի վերապրուկներ հայտնաբերելու հակումով, ապա այժմ առաջին պլան է քաշվում ժողովրդի կենցաղը հենց իր գործողության, հասարակական մյուս երևույթների հետ փոխադարձ կապակցության մեջ քննելու միտումով։ Այդուհանդերձ, ինչ կերպ էլ հետաղոտողը ձեռնամուխ է լինում այս խնդրի իրագործմանը, անկարելի է կենցաղում դրսևորվող նոր երևույթները լուսաբանել որպես այդպիսիք, եթե դրանք պատմականորեն չեն դիտվում, այսինքն՝ հանգամանորեն ցույց չի տրվում, թե կենցաղային այս կամ այն երևույթը և կենցաղը ամբողջությամբ առած ինչպիսի փոփոխություններ է կրում և ինչով են պայմանավորված այդ փոփոխությունները։ Այս բոլոր, առաջին հայացքից դյուրամատչելի, բայց ըստ էության բազմազան ու բարդ երևույթները ամբողջականորեն, փոխադարձ կապակցության մեջ քննելը մեզ մոտ կատարվում է պատմա-համեմատական մեթոդի կիրառմամբ, նորը լինելության, հնի մնացուկների դեմ պայքարի և դրանց հաղթահարման պրոցեսում դիտելու միջոցով։ Դրա շնորհիվ էլ ազգագրագետը դադարում է կենցաղային երևույթների ստատիկ վիճակի լոկ նկարագրող լինելուց և հանդես է գալիս որպես կենցաղում կատարվող փոփոխությունների ընդհանրացնող։

Առաջնորդվելով այդ մեթոդով, անցած հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանի ազգագրագետները աշխատել են մի շարք կարևոր հարցերի մշակման վրա, որոշ թեմաներ Մոսկվայի Ազգագրության ինստիտուտի միջոցով կոորդինացնելով Միության մյուս ազգագրական հաստատությունների հետ։

Մեր ուշադրության կենտրոնում է եղել հայ ժողովրդի կենցաղում սովետական շրջանում կատարված փոփոխությունների ուսումնասիրման հարցը։ Լայն ընդգրկումով հավաքված նյութերի հիման վրա մշակվել են Սովետական Հայաստանի բանվորների և գյուղացիների արդի կենցաղին ու կուլտուրային վերաբերող որոշ հարցեր։

Հնգամյակի տարիներին, փորձել ենք բնորոշ կողմերով, Սովետական Հայաստանի հիմնական ազգագրական շրջանների նյութերով, ցույց տալ կենցաղում կատարված փոփոխությունները։ Այդպես են դրվել «Հայ բանվորների կենցաղը մինչև ռևոլյուցիան և սովետական շրջանում» (հեղինակ՝ Է. Տ. Կարապետյան), «Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության կենցաղը» (հեղինակներ՝ Վ. Հ. Բդոյան, Դ. Ս. Վարդումյան) ակնարկները, «Կովկասի ժողովուրդները» հատորի «Հայերը» բաժնի համար և «Անդրկովկասի քրդերի կենցաղը սովետական շրջանում» (հեղինակ՝ Ա. Ավդալ) ակնարկը դարձյալ նույն հատորի համար, ինչպես նաև «Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության ընտանիքը և ընտանեկան կենցաղը» (հեղինակներ՝ Է. Տ. Կարապետյան, Դ. Ս. Վարդումյան) աշխատանքը «ՍՍՌՄ ժողովուրդների ընտանիքը և ընտանեկան կենցաղը» ժողովածուի համար։

Այս առթիվ անհրաժեշտ է առաջ քաշել մի կարևոր հարց։ Նշված հատորին և ժողովածուին մասնակցող որոշ ռեսպուբլիկաների ազգագրագետներ ամբողջ ժողովրդի նոր կենցաղը ընդհանրացրել են մի գյուղի օրինակով (այդպես են վարվել, օրինակ, ռուս ազգագրագետները. ռուս գյուղացիության նոր ընտանիքը փորձելով տալ Վիրյատինո գյուղի օրինակով) և կամ ազ-

կագրական 3—4 հիմնական շրջաններից յուրաքանչյուրի մեկ գյուղի օրինակով (այդպես են վարվել, օրինակ, վրաց ազգագրագետները)։ Նման մեթոդը խիստ խրախուսելի լինելով մենագրական բնույթի ուսումնասիրության համար, միակողմանի ու պակասավոր կարող է լինել ամբողջ ժողովուրդը ներկայացնելու առումով։ Մինչդեռ Ադրբեջանի, Լատվիայի և Հայաստանի ազգագրագետները, օրինակ, ներկայացրել էին իրենց ժողովուրդների նոր կենցաղը թե՛ թեմատիկ և թե՛ տերիտորիալ տեսակետից բազմակողմանիորեն ընդգրկող աշխատանքներ։ Սրանց քննարկումները Մոսկվայում՝ մասնագետների լայն շրջանում, ցույց տվեցին, որ դրանք լինելով համեմատաբար փոքրածավալ, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ հաջողված ընդհանրացնող աշխատանքներ են նոր կենցաղի վերաբերյալ։

Մեզ մոտ՝ Հայաստանում, միաժամանակ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ նոր կենցաղի առանձին կողմերի և ազգագրական առանձին շրջանների վերաբերյալ։ Այսպես, մշակվել են բանվորների և գյուղացիների նոր կենցաղին վերաբերող թեմաներ՝ «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության բանվորների նոր կենցաղն ու կուլտուրան (հեղինակ՝ Վ. Ս. Թեմուրճյան), «Երևանի Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի բանվորների կենցաղը» (հեղինակ՝ Է. Տ. Կարապետյան), «Լոռեցիների կոլտնտեսային կենցաղը» (հեղինակ՝ Գ. Ս. Վարդումյան), որը նախ պաշտպանվել է որպես թեկնածուական դիսերտացիա, ապա հրատարակվել է վերջերս։

Անցած հնգամյակում շարունակվել է նաև հայ ժողովրդի նախասովետական ժամանակաշրջանի կենցաղի և կուլտուրայի առանձին կողմերի ուսումնասիրությունը, որոշ թեմաների գծով ընդգրկելով նաև համապատասխան նորը։ Եթե նոր կենցաղին վերաբերող ուսումնասիրություններն ունեն առավելապես տերիտորիալ ընդգրկման թնքում՝ գրեթե բոլոր հիմնական թեմատիկ հարցերի ներառմամբ, ապա վերջիններս մեծ մասամբ և առաջին հերթին թեմատիկ բնույթի են՝ լայն կամ նեղ տերիտորիալ ընդգրկմամբ։

Այդպիսիք են պատմա-ազգագրական առումով կատարված «Գորգագործությունը Հայաստանում» (հեղինակ՝ Վ. Թեմուրճյան) աշխատանքը, որը նախ պաշտպանվել է որպես թեկնածուական դիսերտացիա, ապա հրատարակվել է վերջերս, «Անասնապահությունը Հայաստանում» (հեղ. Վ. Թեմուրճյան), «Արտաշատի հայերի ընտանեկան և ազգակցական հարաբերությունները» (հեղ. Վ. Բդոյան), որոնց մեջ ուսումնասիրված են համապատասխան բնագավառների թե՛ անցյալին և թե՛ ներկային վերաբերող նյութերը։ Ավարտվել են նաև «Հայկական խաղեր» (հեղինակներ՝ Վ. Բդոյան, Մ. Մամիկոնյան), «Անդրկովկասի քրդերի կենցաղը մինչև ռևոլյուցիան և սովետական շրջանում» (հեղ. Ա. Ավդալ) ստվարածավալ աշխատանքները։ Այս տարի ավարտվելու է անցյալ հնգամյակի վերջին սկսված «Հայկական գերդաստան» (հեղ. Է. Կարապետյան) աշխատանքը։

Հարկ է նշել, որ բոլոր դեպքերում էլ սովետահայ ազգագրագետները թեմատիկ հետազոտությունները ծառայեցնում են մենագրական ամբողջացնող ուսումնասիրությունների հասնելուն, աշխատելով ընդգրկել ժողովրդի նյութական և հոգևոր կուլտուրայի բոլոր հիմնական կողմերը։ Տվյալ դեպքում հանգամանորեն չքննելով և չգնահատելով այդ աշխատանքները, անհրաժեշտ է նշել, որ դրանց մեջ, հատկապես նոր կենցաղին ու կուլտուրային վերաբերող դրվագներում, չնայած ոչ աղաղակող չափերով, այնուամենայնիվ, նկատելի է իրականության որոշ պունազարդում, շքահանդեսային երանգներ։

Ուսումնասիրություններում ոչ միշտ է ճիշտ լուսաբանվել ազգային կուլտուրայի անցյալի լավագույն տրադիցիաները վերամշակված զարգացնելու հարցը։ Այսպես, մինչև այժմ էլ լրջորեն չի դրվել կիրառական արվեստների բնագավառում հայ ժողովրդի կուտակած հարուստ փորձի ստեղծագործական յուրացման և վերակենդանացման հարցը։ Այս տեսակետից թերևս բացառություն է կազմում ճարտարապետությունը, բայց այն էլ ոչ բուն ժողովրդականը։ Որոշ չափ հատկապես վերջին տարիներս արվել է գորգագործության մեջ ժողովրդական մոտիվները ստեղծագործարար զարգացնելու ուղղությամբ, բայց հենց այս բնագավառում էլ ամենից ավելի է տուրք տրվել անհատի պաշտամունքին՝ դիմանկարային ժանրի միջոցով։ Մինչդեռ մեր ազգագրագետները մեծ անելիքներ ունեն ինչպես այդ բնագավառների, նույնպես և հայկական ազգային տարազի, կերակրատեսակների և ժողովրդական կուլտուրայի մյուս բնագավառների ռացիոնալ տեսակների ու տարրերի օգտագործման ու զարգացման հարցում։ Առաջնակարգ գործնական նշանակություն ունի հատկապես հայկական ժողովրդական տան ուսումնասիրումը և նոր պայմաններին հարմարեցնելը։ Սովետահայ ճարտարապետները վիթխարի գործ են

կատարել ազգային ճարտարապետության տրադիցիաները զարգացնելու գործում, բայց նրանք իրենց ուշադրությունը հիմնականում սևեռել են քաղաքային շինարարության վրա և բացառապես արտաքին ձևավորման առումով։ Մինչդեռ Հայաստանի կոլտնտեսային գյուղում կատարվող արմատական վերափոխումը կենսական անհրաժեշտություն է առաջացրել հենց ներկայումս էր գոյություն ունեցող ժողովրդական տան կոմպլեքսի ստեղծագործական վերակառուցման, նրանում դարերով ազգային ճաշակով մշակված կենցաղային հարմարությունների հմուտ օգտագործման, մի բան, որի իրագործումը շատ բանով կախված է ազգագրական ուսումնասիրությունների արդյունքներից։

Վերանայելով մեր աշխատանքները պարտիայի 20-րդ համագումարի որոշումների լույսի տակ, անհրաժեշտ է շոշափել նաև մի այլ կարևոր հարց։ Երևույթները ոչ միշտ օբյեկտիվորեն, երբեմն գունազարդված ներկայացնելու հետևանքով, հատկապես ՍՍՌՄ ժողովուրդների նոր կենցաղի ու կուլտուրայի ուսումնասիրությամբ զբաղվող ազգագրագետների աշխատանքներում նկատելի է միապաղաղություն, որն առաջանում է տարբեր ժողովուրդների նոր կենցաղն ու կուլտուրան խիստ միանման ներկայացնելու հետևանքով։ Իսկ դա ստացվում է այն դեպքում, երբ հաճախ ուսումնասիրությունը կատարվում է ոչ թե կոնկրետ նյութերի հիման վրա, այլ ընդհանուր սխեմաները շղարշի նման տարածելով այդ նյութերի վրա։ Դա էլ իր հերթին հասցնում է այն բանին, որ ուսումնասիրությունը զրկվում է կոնկրետությունից, անհնարին է դառնում առանձին ժողովուրդների կենցաղի և ազգային կուլտուրայի յուրահատկությունների բացահայտումը։

Նույն կերպ և չեն տարբերվել ժողովրդի առանձին ազգագրական խմբերի յուրահատկությունները։ Չէ որ մինչև այժմ էլ նկատելի են նույն ժողովրդի տարբեր հատվածների կենցաղային երանգավորումները։ Այսպես։ Հայկական ՍՍՌ Սևանի ավազանի և Արագածոտնի (հատկապես նախկին սասունցիների) բնակիչների հարսանեկան սովորույթներում դեռևս ուժեղ կերպով պահպանվում են «կանչի», քավորի կողմից ծախսերը իր վրա վերցնելու և մի շարք այլ երևույթներ, մինչդեռ դրանք գրեթե վերացել են մյուս շրջաններում։

Մինչև վերջերս, նոր կենցաղի ուսումնասիրությանը ձեռնարկելու ժամանակից սկսած, թերագնահատվել է հին կենցաղի ուսումնասիրությունը։

Սխեմատիզմով կաշկանդված են եղել ոչ միայն նոր կենցաղն ուսումնասիրողները։ Սեղմված հեղինակությունների «համապարփակ դրույթների» շրջանակներում, անցյալի ազգագրությամբ զբաղվողները նույնպես չեն համարձակվել կոնկրետ երևույթները քննել ըստ էության, ելնելով առանձին ժողովուրդների պատմության, նրանց ազգային կուլտուրայի և ինքնատիպ կենցաղի յուրահատկություններից, հենց դրա հետևանքով էլ մինչև օրս լիովին բացահայտված չեն ասենք, հայկական ընտանեկան համայնքի առանձնահատկությունները, նրա բազմադարյան գոյության պատճառները դասակարգային հասարակության պայմաններում։ Վերջին հանգամանքի հետ կապված, չի արծարծվել այն հարցը, թե արդյոք ընտանեկան համայնքը զուտ և միայն նախնադարյան-տոհմային կարգերի մնացուկ է։ Թերևս այն գրեթե մի նոր որակ է և տիպիկ ընտանիք ստրկատիրական ու ֆեոդալական Հայաստանի պայմաններում, ինչպիսին որ եղել է գյուղական համայնքը։ Հաճախ պարփակվելով ազգային նեղ շրջանակներում, մեր ազգագրագետները խոր համեմատություններ չեն կատարում նույնիսկ հարևան ժողովուրդների հետ, դրա մեջ մեկին կամ մյուսին նսեմացնելու վտանգ տեսնելով։ Մինչդեռ, օրինակ, պատմական բախտի բոլորին հայտնի միասնությամբ հանդերձ, նաև կան բնորոշ առանձնահատկություններ հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդների հենց արդի էթնիկական կառուցվածքի և կենցաղի մեջ։ Մյուս կողմից էլ այդ կտրվածությունը հասցնում է այն բանին, որ երբեմն կուլտուրայի որոշ երևույթներ ամեն ազգագրագետ վերագրում է միայն ու միայն իր ժողովրդին. մինչդեռ իրականում դրանք իրենց ծագումով ընդհանուր առմամբ առաջավոր-ասիական են, իսկ դրանց զարգացման և կատարելագործման խնդրում իրենց լուման են մտցրել Առաջավոր Ասիայի բոլոր ժողովուրդները։ Այդ երևույթների թվին են պատկանում թոնիրը, գութանը, անիվը և այլն, և այլն։

Սրանք և մի շարք նման հարցեր պատշաճ լուսաբանություն չեն գտել ոչ միայն սովետահայ, այլ նաև ընդհանրապես սովետական ազգագրության մեջ։

Անցած հնգամյակում Հայաստանում աշխատանքներ են կատարվել նաև թանգարանային նյութերի մշակման և ցուցադրություն կազմակերպելու ուղղությամբ։ Հիմնականում մշակվել են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության թանգարանի ազգագրական

հարուստ ֆոնդերը, չնայած որ նոր էքսպոնատներ շատ քիչ են ձեռք բերվել։ Տարբեր ձևով, բայց և այնպես վերականգնվել է 1930-ական թվականների կեսերից հետո հետզհետե գրեթե դուրս մղված ազգագրական ցուցադրությունը՝ կազմակերպվել է Հայաստանի պատմության 16—18-րդ դարերի կոմպլեքսային ցուցադրություն՝ պատմական և ազգագրական նյութերի հիման վրա։ Ի տարբերություն նախորդների, ներկա ցուցադրության առավելությունն այն է, որ այստեղ ազգագրական էքսպոնատները ծառայեցվել են ժողովրդի պատմության որոշակի ժամանակաշրջանի կուլտուրան ցայտուն կերպով դրսևորելուն, դրանով իսկ ազգագրական նյութերի օգտագործումը ավելի նպատակասլաց է դարձել։

Վեցերորդ հնգամյակում (1956—1960 թթ.) Հայաստանի ազգագրագետները ավելի են ծավալելու իրենց աշխատանքը հայ ժողովրդի ազգագրության ընդհանուր պրոբլեմից բխող մի շարք կարևոր թեմաների ուսումնասիրման վրա։

Մշակվելու են Սովետական Հայաստանի ազգագրական շրջանների ու խմբերի փոխազդեցությունների և դրա հետ կապված հայ ժողովրդի կուլտուրայի ու կենցաղի միասնության կազմավորման հարցը՝ պատմական ասպեկտով, գյուղատնտեսական մթերքների վերամշակման ժողովրդական եղանակների, երկրագործական գործիքների տեղական տեսակների, հայկական փոքր ընտանիքի և կոլտնտեսային ընտանիքի ուսումնասիրման հարցերը։ Այս բոլոր թեմաներն էլ, որոնց կատարումը կամ արդեն սկսվել է և կամ սկսվելու է հաջորդ տարվանից, գիտական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և դրանց մի մասը հետագայում լուրջ մենագրություն կարող է դառնալ։ Այնուամենայնիվ, վերը նշվածով ոչ միայն չեն սպառվում, այլև հեռու են ընդգրկվելուց այն հիմնական թեմաները, որոնց մշակումը ներկայումս առաջնակարգ նշանակություն ունի։ Այսպես։ Դեռևս բաց է մնում գյուղական ժամանակակից տան խոր և բազմակողմանի ուսումնասիրությունը, մինչդեռ դա թե՛ տեսական և թե՛ գործնական մեծ կարևորություն ունի։ Հայ ազգագրագետները վաղուց դադարել են ազգային տարազի, տնտեսական կենցաղի մի շարք բնագավառների՝ հատկապես արհեստագործության ու տնայնագործության, շերամապահության, մեղվաբուծության, ինչպես նաև պաշտամունքների ու հավատալիքների և այլ նյութերի հետազոտությամբ զբաղվելուց։ Մասնագիտորեն գրեթե չեն ուսումնասիրված Մատենադարանի ձեռագրերն ու մանրանկարները, որոնք կարող են հազվագյուտ նյութեր տալ ժողովրդի միջնադարյան կենցաղի մասին։ Վերջապես, սիստեմատիկ ուսումնասիրություն չի կատարվել հայ ազգագրության պատմությունը գիտականորեն վեր հանելու ուղղությամբ։ Անհրաժեշտ է նաև ձեռնարկել հայ ժողովրդի ազգագրության ձեռնարկ կազմելու գործին։

Այս ամենն արդեն ավելի հեռանկարային հարցեր են, որոնց լուծումը ենթադրում է մի շարք պայմանների առկայություն։

Ընթացիկ հնգամյակում նախատեսվում է կազմակերպել նաև գիտարշավներ Սովետական Հայաստանի և Անդրկովկասի հայաբնակ վայրերի առանձին ազգագրական շրջանները։

Հայտնի է, որ հայ ազգագրության մեջ անցյալում կիրառվել է սիստեմատիկ դաշտային նյութեր հավաքելու պրակտիկան, որպիսի նյութերը հրատարակվել են «Ազգագրական հանդես»-ում։ Այդ նյութերը մինչև այժմ էլ հարուստ աղբյուր են հանդիսանում մեր ժողովրդի անցյալ հասարակական կյանքի և կուլտուրայի ուսումնասիրման համար։

Փաստ է, սակայն, որ այդ լավագույն տրադիցիան 1930-ական թվականներից հետո գրեթե ընդհատվել է։ Ներկայումս մեր ազգագրագետները անհատական գործուղումների միջոցով դաշտային նյութեր են հավաքում միայն իրենց թեմատիկ աշխատանքների համար։ Նույնպիսի բնույթ են կրում նաև գիտարշավները։ Նման պայմաններում անհնարին է ընդգրկել կենցաղի բոլոր կողմերը (և այդպիսի նպատակ չի էլ դրվել մինչև այժմ), ինչպես նաև նյութերի հավաքումը կատարել համապատասխան իլյուստրացիաներով (լուսանկար, գծանկար, գծագիր և այլն)։ Մյուս կողմից, չնայած «Ազգագրական հանդեսում» հրատարակված հսկայական նյութերին, որոշ ազգագրական շրջաններ և կենցաղի կարևոր բնագավառներ դուրս են մնացել նրա տեսադաշտից։ Այսպես՝ Արարատյան դաշտը բոլորովին արտացոլում չի գտել «Հանդեսի» էջերում, գրեթե նյութեր չեն հրատարակվել աշխատանքային գործիքների, ժողովրդի այս կամ այն հատվածի զբաղմունքների, արհեստագործության մի քանի ճյուղերի և մի շարք այլ հարցերի առթիվ։

Այս ամենից բացի, «Ազգագրական հանդեսի» հրատարակումը դադարելու օրից (1916 թ.) հետո ընկած 40-ամյա ժամանակաշրջանում, մեր ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխություններին համապատասխան, փոփոխություններ են կա-

տարվել նաև նրա կուլտուրայի և կենցաղի մեջ։ Ուստի և խիստ անհրաժեշտություն է զգացվում վերականգնել ազգագրական սիստեմատիկ գիտարշավների կազմակերպումը։ Դրանով հնարավորություն կընձեռվի բազմակողմանիորեն, կենցաղի բոլոր կողմերն ընգգրկելով (հենց թեկուզ միայն Ստ. Լիսիցյանի 1946 թ. հրատարակված «Ազգագրական հարցարանի» սահմաններում), ցույց տալ հայ ժողովրդի ներքին կյանքում սովետական պայմաններում կատարված փոփոխությունները, և հատկապես գրի առնելու մեր ազգագրագետների տեսադաշտից մինչև այժմ դուրս մնացած կենցաղային մի շարք կարևոր երևույթներ, որոնք գիտական որոշակի արժեք են ներկայացնում, բայց և որոնք, հապաղման դեպքում, կմաանվեն անդարձ կորստի, որպես արդեն եղել է դրանց մի զգալի մասի հետ։

Միաժամանակ նախատեսվում է, ուսումնասիրություններից բացի, ընթացիկ հնգամյակում պարբերաբար հրատարակել «Նյութեր հայ ազգագրության» ժողովածուն, ուր կմտնեն ոչ միայն գիտարշավների արդյունքները, այլև առանձին բանահավաքների նյութերը, որպիսիք արդեն իսկ առկա են։